

<https://doi.org/10.46991/hc.2025.si1.023>

**Armenian-Russian relations in the spring and summer of 1920 in the context of the
Armenian side's failures**

Ashot Hayruni

<https://orcid.org/0009-0001-5026-7315>

YSU Professor at the Chair of Armenian history,
Head of the Genocide Studies Department at the Institute for Armenian Studies, PhD
ashot.hayruni@ysu.am

Keywords - Republic of Armenia, Hamo
Ohanjanyan, Levon Shant, Soviet Russia, Chicherin,
Legran, Kemal, negotiations.

Prime Minister of the Republic of Armenia, H. Ohanjanyan, and his government, by unilaterally tying the resolution of the Armenian Question to the Paris Peace Conference and the Treaty of Sèvres, failed to assess the real opportunities that Russia's return to the region presented for Armenia. In June 1920, Russia prohibited Kemal from attacking Armenia while simultaneously pressuring him to accept its mediation in delineating the border between Armenia and Turkey. However, the Armenian government not only refused to accept Russia's mediation but also consistently failed to establish bilateral relations with Russia. This was despite Russia's promises to allocate certain territories from Western Armenia to the Republic of Armenia. By shortsightedly rejecting Russia's military-political support, the Armenian side effectively gave the Kemalists the green light to launch an attack on Armenia.

The widely held view among us that Armenia became a victim of the Kemalist-Bolshevik alliance does not correspond to reality. Had the opportunities presented by Russia been realistically assessed and utilized, not only could the Kemalist invasion of Armenia have been prevented, but Armenia's territory might also have been significantly expanded.

**Հայ-ռուսական հարաբերությունները 1920 թ. գարնանը և ամռանը հայկական կողմի
ձախողումների համատեքստում**

History and Culture. Journal of Armenian Studies, special issue 1, 2025, pp. 23-40.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0
International License.

Received: 17.11.2024

Revised: 17.12.2024

Accepted: 21.04.2025

© The Author(s) 2025

Աշոտ Հայրունի
ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր,
ՀՀԻ Ցեղասպանագիտության բաժնի վարիչ, պ. գ. դ.

Հիմնաբառեր - Հայաստանի
Հանրապետություն, Համո Օհանջանյան, Լևոն
Շանթ, Խորհրդային Ռուսաստան, Չիչերին,
Լեզրան, Քեմալ, բանակցություններ:

ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանն ու իր կառավարությունը, Հայկական հարցի լուծումը միակողմանիորեն կապելով Փարիզի խաղաղության վեհաժողովի և Սևրի պայմանագրի հետ, անկարող եղան գնահատելու այն իրական հնարավորությունները, որոնք Հայաստանի առջև բացում էր տարածաշրջանի վերադարձող Ռուսաստանը: Ռուսաստանը 1920 թ. հունիսին Քեմալին արգելեց հարձակվել Հայաստանի վրա՝ միաժամանակ հարկադրելով ընդունել իր միջնորդությունը Հայաստանի հետ Թուրքիայի սահմանը գծելու հարցում: Հայաստանի կառավարությունը, սակայն, ոչ միայն հրաժարվեց Ռուսաստանի միջնորդությունն ընդունել, այլև հետևողականորեն ձախողում էր Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունների հաստատումը, մինչդեռ վերջինս խոստանում էր Հայաստանի Հանրապետությանը հատկացնել որոշակի տարածքներ Արևմտյան Հայաստանից: Հայկական կողմը, անհետատեսորեն մերժելով Ռուսաստանի ռազմաքաղաքական աջակցությունը՝ այդպիսով նաև կանաչ լույս էր վառելում քեմալականների առջև՝ Հայաստանի վրա հարձակվելու համար:

Մեզանում արմատացած այն տեսակետը, թե Հայաստանը դարձավ քեմալա-բոլշևիկյան դաշինքի գոհր, չի համապատասխանում իրականությանը, քանի որ եթե Ռուսաստանի կողմից մեզ տրված հնարավորություններն իրատեսորեն գնահատվեին և օգտագործվեին, ապա ոչ միայն կխափանվեր քեմալականների ներխուժումը Հայաստան, այլև վերջինիս տարածքը կարող էր էապես ընդարձակվել:

Армяно-российские отношения весной и летом 1920 года в контексте неудач
армянской стороны

Ашот Айруни
ЕГУ профессор кафедры армянской истории,
руководитель отдела исследований геноцида Института армяноведения, д. и. н.

Ключевые слова – Республика Армения,
Амо Оганджян, Левон Шант, Советская Россия,
Чичерин, Легран, Кемаль, переговоры.

Премьер-министр РА Х. Оганджян и его правительство, в одностороннем порядке связывающее решение армянского вопроса с Парижской ассамблеей мира и Севрским договором, не смогли оценить реальные возможности, которые открыло для Армении возвращение России в регион. Россия в 1920 году в июне запретил Кемалю нападать на Армению, в то же время вынудив его принять его посредничество в вопросе проведения границы Турции с Арменией. Однако правительство Армении не только отказалось принять посредничество России, но и последовательно не смогло установить двусторонние отношения с Россией, в то время как последняя обещала выделить Республике Армения определенные территории из Западной Армении. Армянская сторона, недальновидно отвергнув военно-политическую поддержку России, тем самым также дала Кемалю зеленый свет для нападения на Армению.

Укоренившееся в нас представление о том, что Армения стала жертвой кемальско-большевистского союза, не соответствует действительности, поскольку, если бы возможности, предоставленные нам Россией, были реально оценены и использованы, то не только было бы сорвано вторжение Кемалю в Армению, но и территория последнего могла быть значительно расширена.

* * *

Մուտք: Խորհրդային շրջանում Հայաստանի առաջին հանրապետության պատմությունը, մասնավորապես 1920 թ. իրադարձությունները լուսաբանվում էին խորհրդահայ և դաշնակցական պատմագրության միջև մշտապես առկա «խրամատային» պայքարի պայմաններում: Առաջինը մեծ մասամբ բացասական գույներով էր ներկայացնում Դաշնակցության դերակատարությունը՝ վերջինիս վերագրելով հանրապետությանը և հայ ժողովրդին պատուհասած աղետների ողջ պատասխանատվությունը, իսկ երկրորդը փորձում էր դա վերագրել Խորհրդային Ռուսաստանին՝ արդարացնելով իրեն և ստեղծելով քեմալա-բոլշևիկյան դաշինքին Հայաստանի գոհաբերման «տեսությունը»:

Խորհրդային գաղափարական ճնշումներից հոգնած՝ հայաստանյան պատմագիտությունը ԽՍՀՄ փլուզումից հետո մեծ մասամբ գերադասեց ընդունել դաշնակցական պատմագրության թեզերը՝ բավականաչափ չկարևորելով խորհրդահայ պատմագիտության ձեռքբերումները, ինչպես և ՀՅԴ այն գործիչների (Հ. Քաջազնունի, Ա. Բաբայան, Հ. Տեր-Հակոբյան և այլք) հրապարակումները, որոնք տուրք չեն տվել վերոնշյալ կուսակցական պայքարին ու կուսակցական շահերին: Այդ պատճառով խնդրո

առարկա պատմաշրջանի որոշ առանցքային իրողություններ դեռ լրացուցիչ պարզաբանման և վերագնահատման կարիք ունեն, ինչը հույժ անհրաժեշտ է նաև դրանցից ածանցվող դասերն ընկալելու համար:

Հոդվածի սեղմ շրջանակում փորձ է արվում լուսաբանել 1920 թ. գարնանը և ամռանը հայ-ռուսական հարաբերություններում ի հայտ եկած ձախողումները և դրանց պատճառները, որոնք վճռորոշ նշանակություն ունեցան իրադարձությունների հետագա աղետալի ընթացքի համար:

Հայաստանի վրա քեմալականների հարձակման արգելումը Խորհրդային Ռուսաստանի կողմից: Մինչ Փարիզի խաղաղության խորհրդաժողովում Թուրքիայի հետ հաշտության կնքումը ձգձգվում էր, Մ. Քեմալը և նրա շուրջ համախմբված թուրք ազգայնական շրջանները վճռական պայքար ծավալեցին Թուրքիան մասնատումից փրկելու համար:

«Ընդհանուր թշնամիների» դեմ համատեղ պայքար ծավալելու պատրվակով Քեմալը նաև գործուն քայլեր էր ձեռնարկում՝ ձեռք բերելու Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը: 1920 թ. ապրիլի 26-ին, երբ կարմիր բանակը, հաղթանակներ տանելով քաղաքացիական պատերազմում, արդեն Անդրկովկասի մատույցներում էր, նա Լենինին ուղարկեց մի նամակ՝ Ռուսաստանից խնդրելով օգնություն ոսկու, զենքի և զինամթերքի տեսքով: Քեմալը նամակում նաև մի յուրահատուկ գործարք էր առաջարկում Լենինին. պատրաստակամություն հայտնելով աջակցել Ադրբեջանի խորհրդայնացման հարցում և Վրաստանում նույնպես Ռուսաստանին վերապահելով գործողությունների ազատություն, նա հայտնում էր «իմպերիալիստական» Հայաստանի վրա հարձակվելու իր մտադրությունը: «Եթե խորհրդային ուժերը նախատեսում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ, - գրում էր նա, - կամ դիվանագիտական ճանապարհով իրենց ազդեցության միջոցով Վրաստանին կստիպեն դաշինքի մեջ մտնել ու ձեռնարկել անգլիացիների վտարում Կովկասի տարածքից, թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում պատերազմական գործողությունները իմպերիալիստական Հայաստանի դեմ և պարտավորվում է ստիպել Ադրբեջանի հանրապետությանը մտնելու խորհրդային պետության շրջանակի մեջ» [Արզումանյան, 1973, 299]:

Քեմալը համոզված էր, որ, Ադրբեջանն ու Վրաստանը Ռուսաստանին զիջելով, կստանար Ռուսաստանի համաձայնությունը Հայաստանի վրա հարձակվելու համար: Ուստի նա 1920 թ. նույնիսկ չսպասելով իր նամակի պատասխանին, հունիսի 6-ին արևելյան բանակի հրամանատարությանը հրամայեց նախապատրաստել ռազմական գործողությունները [Տեր-Յակոբեան, 1921, 19]: Քեմալին, սակայն, հուսախաբություն էր սպասվում, քանի որ Ռուսաստանը մտադիր չէր նրան թույլ տալ՝ Հայաստանի դեմ

ռազմական գործողություններ սկսել: Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողովում Գ. Չիչերինը հունիսի 3-ին Քեմալին ուղարկած իր պատասխան նամակում, ողջունելով Անտանտի դեմ համատեղ պայքարելու՝ նրա առաջարկը, միաժամանակ մերժում էր Հայաստանի վրա հարձակվելու գաղափարը՝ ընդգծելով, որ խորհրդային կառավարությունն իրեն է վերապահում միջնորդի դերակատարությունը Հայաստանի և Պարսկաստանի հետ Թուրքիայի սահմանները որոշելու հարցում:

Չնայած դրան, հույս ունենալով շահարկել այն հանգամանքը, թե Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակների առանձին վայրերում դիրքեր զբաղեցնելը Հայաստանի վրա հարձակում չի նշանակում, Քեմալը փորձում էր շարունակել հարձակման նախապատրաստությունը, սակայն ստիպված եղավ այն դադարեցնել Էրզրում ժամանած խորհրդային մի պատվիրակի վճռական պահանջի հիման վրա [Տեր-Յակոբեան, 1921, 10]:

Այն, որ Հայաստանի վրա հարձակումից հրաժարվելու պատճառը ռուս պատվիրակի այցելությունն էր, վկայվել է նաև Անկարայի կառավարության արտգործնախարարության քաղաքական բաժնի և անձամբ Քեմալի կողմից [Վրացյան, 1993, 487-788]: Վերջինս ստիպված եղավ տեղի տալ խորհրդային կառավարության պահանջներին՝ ինչպես հավաստվում էր հունիսի 20-ին Չիչերինին ուղարկված նրա հեռագրում, «սիրահոժար կերպով» ընդունելով նաև Ռուսաստանի միջնորդությունը Հայաստանի ու Պարսկաստանի հետ Թուրքիայի սահմանների որոշման հարցում [Տեր-Յակոբեան, 1921, 11-12]:

Հայ-ռուսական բանակցությունները Մոսկվայում և դրանց ձախողումը: 1920 թ. գարնանը խորհրդային կառավարությունը քայլեր ձեռնարկեց Հայաստանի և Վրաստանի հետ բանակցությունների մեջ մտնելու ուղղությամբ: Ապրիլի 8-ին Օրջոնիկիձեն Վլադիկավկազում ՀՀ ներկայացուցիչ Հ. Սառեկյանին, ներկայացնելով Հայաստանի հանդեպ խորհրդային կառավարության բարեկամական դիրքորոշումը, հաղորդեց խորհրդային կառավարության պատրաստակամությունը՝ Հայաստանի հետ բանակցություններ վարելու և հաշտություն կնքելու մասին՝ առաջարկելով անհապաղ սկսել բանակցությունները [Ալիխանյան, 1966, 96]:

Հայաստանի կառավարությունը կազմեց մի պատվիրակություն, որի կազմում ընդգրկվեցին Լ. Շանթը (նախագահ), Հ. Տերտեռյանն ու Լ. Զարաֆյանը, և որն ապրիլի 30-ին մեկնեց Թիֆլիս՝ այնտեղից Մոսկվա ուղևորվելու համար: Վրաստանը, դեռ նախքան հայկական պատվիրակությունը ճանապարհ կրնկներ, շտապ կերպով մի պատվիրակություն ուղարկեց Մոսկվա, որը 6 օրում հասավ այնտեղ, սկսեց բանակցություններ և հունիսի 7-ին Ռուսաստանի հետ ստորագրելով պայմանագիր, որով վերջինս ճանաչում էր նրա անկախությունը, վերադարձավ [Խատիսյան, 2018, 283]: Հայկական պատվիրակությունը, սակայն, ակնհայտորեն չէր շտապում, և, չնայած խորհրդային կառավարությունը, մեծապես կարևորելով հայկական կողմի հետ

բանակցությունները, պատրաստակամություն էր հայտնել հայ պատվիրակներին ճեպընթաց գնացք տրամադրել, վերջիններս նախընտրեցին գնալ այլ ճանապարհով: Վլադիկավկազում մնալով 10-12 օր, մի քանի օր էլ կանգ առնելով Նոր Նախիջևանում՝ նրանք Մոսկվա հասան 26 օրվա ընթացքում [Կարինյան, 1926, 23-24]:

Պատվիրակությունը ոչ միայն Մոսկվա հասնելու հարցում չէր շտապում, այլև ակներևաբար, ինչպես որոշ ուսումնասիրողներ նշում են, կառավարությունից հրահանգ էր ստացել ձգձգել բանակցությունները, մինչև դաշնակիցների, մասնավորապես Անգլիայի խոստացած ռազմական օգնությունը տեղ կհասներ [Կարապետյան, 1965, 3: հմմտ. Կարինյան, 1926, 24]: Վերջիններս, սակայն, ի պատասխան տնտեսական, ռազմական և այլ բնագավառներում օգնություն ցուցաբերելու՝ Հայաստանի կառավարության «անդադար դիմումներին», բավարարվում էին՝ միայն անորոշ խոստումներ և սին հույսեր տալով [Տերտերեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 1.335, 1954, 3]:

Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցությունները հնարավորինս ձգձգելու՝ Հայաստանի կառավարության դիրքորոշումը փաստարկվում էր նաև հետագա իրադարձություններով, մինչդեռ Ռուսաստանը շտապում էր օր առաջ սկսել բանակցությունները: Այդ էր պատճառը, որ Վլադիկավկազի շրջանային գործկոմի նախագահը Մոսկվայից հրահանգ էր ստացել պատվիրակությանը «շտապ կերպով ճանապարհել» Մոսկվա, իսկ խորհրդային ռազմական կոմիսար Լ. Տրոցկին «բոլոր ուղղությամբ հեռագրական կարգադրություններ էր արել՝ ճշտելու համար Հայաստանի պատուիրակության գտնուած վայրը եւ շտապեցնելու համար նրա ժամանումը Մոսկուա» [Տերտերեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 1.335, 1954, 6-7]: Երբ պատվիրակությունն, ի վերջո, հասավ Մոսկվա, Երևանի հետ վերջինիս կապի հարցում տեխնիկական դժվարությունները բացառելու համար նրան տրամադրվեց նաև Ռոստովի միջոցով Թիֆլիսի հետ ուղիղ հեռագրաթել [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 51]:

Եթե նկատի առնվի, որ հայկական պատվիրակության մեկնումից կարճ ժամանակ անց Թիֆլիսից Մոսկվա ուղևորվեց նաև քեմալական պատվիրակությունը, ապա պարզ կդառնա, որ խորհրդային կառավարության ցուցաբերած շտապողականությունը պայմանավորված էր՝ նախքան թուրքերի հետ բանակցելը, հայկական կողմի հետ համաձայնության գալու ձգտումով: Դա վկայում էր նաև, թե Ռուսաստանը որպիսի առաջնահերթություն էր տալիս Հայաստանի հետ հարաբերություններին:

Հայկական պատվիրակության հետ բանակցությունները վարում էին Գ. Չիչերինը և նրա տեղակալ Լ. Կարախանը: Հենց առաջին հանդիպման ժամանակ Չիչերինը, հավաստելով խորհրդային կառավարության «անկեղծ ցանկությունը»՝ Հայաստանի կառավարության և հայ ժողովրդի հետ բարեկամական հարաբերություններ ստեղծելու հարցում, ընդգծեց, որ խորհրդային կառավարությունը Հայաստանը խորհրդայնացնելու

մտադրություն չունի և առաջարկեց հրաժարվել դաշնակիցներին ապավինելուց ու Մոսկվայի իրավաբարությանը հանձնել հայկական հարցի լուծումը: «Դուք՝ հայերդ, խոշոր թիրիմացութեան մէջ էք,- ասում էր Չիչերինը, երբ ձեր բոլոր յոյսերը դրել էք եւրոպական դրամատիրական պետութիւնների վրայ: Յիշեցէք ձեր Դատի անցեալը: Քանի՜ քանի անգամներ ձեզ խաբել են այսպէս կոչուած մեծ պետութիւնները: Վստահ ենք, որ այս անգամ եւս ձեր Դատը պիտի գոհեն իրենց ազգային նեղ շահերի համար: Խորհրդային իշխանութիւնը, որպէս բանուորա-գիւղացիական իշխանութիւն, միակ անկեղծ ուժն է, որ անշահախնդիր կերպով կարող է լուծել ձեր Դատը: Հրաժարուեցէք Դաշնակիցներից եւ ձեր հարցի քննութիւնը դուրս բերէք Սերի խորհրդաժողովի օրակարգից եւ յանձնեցէք այն՝ Խորհրդային կառավարութեան իրաւաբարութեան» [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 1.335, 1954, 10]:

Պատվիրակության համար, որը ՀՀ կառավարության կողմից հանձնարարություն էր ստացել հասնելու Հայաստանի հանրապետության ճանաչմանը՝ սահմանների մեջ ներառելով նաև Լեռնային Ղարաբաղը, գոնե սկզբունքորեն ընդունելի դարձնելու թուրքահայ տարածքների կցումը Հայաստանին, Ռուսաստանին հրաժարեցնելու Հայաստանի ներքին գործերին ուղղակի կամ անուղղակի եղանակով միջամտելուց և ստանալու մի շարք տնտեսական ու մշակութային արտոնություններ [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 1.335, 1954, 5], Ռուսաստանի՝ միջնորդության առաջարկն անսպասելի էր: Չնայած հայ պատվիրակները լիազորված չէին՝ բանակցելու Արևմտահայաստանի տարածքների վերաբերյալ, այնուհանդերձ, ըստ Տերտերյանի, «բանակցութիւնները չվիժեցնելու մտահոգութեամբ» շարունակեցին այդ ուղղությամբ խոսակցությունը և փորձեցին պարզել, թե հայկական կողմն ինչ կարող էր ակնկալել խորհրդային միջնորդությունից [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 1.335, 1954, 10]:

Հունիսի կեսերին կայացած տեսակցության ժամանակ պատվիրակությունն ընդառաջում է խորհրդային կառավարությանը՝ Հայաստանի կառավարության և Քեմալի միջև միջնորդությունը խորհրդային կառավարությանը հանձնելու հարցում, իսկ Չիչերինն իր հերթին Խորհրդային Ռուսաստանի անունից խոստանում է Արևմտյան Հայաստանի որոշ տարածքներ միացնել Հայաստանի հանրապետությանը՝ նրան ապահովելով ելք դեպի Սև ծով [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 14]: Ինչ վերաբերում էր Ադրբեջանի հետ սահմաններին, ապա, ըստ ձեռք բերված համաձայնության, Նախիջևանի շրջանն ու Զանգեզուրը պետք է պատկանեին Հայաստանին, իսկ Ղարաբաղը պետք է համարվեր վիճելի, որի իրավական կարգավիճակը որոշվելու էր ժողովրդական հանրաքվեի միջոցով: Բացի այդ՝ բավարարվում էին պատվիրակության՝ տնտեսական և մշակութային հարցերին վերաբերող մի շարք կարևոր առաջարկները: Մոսկվայում և Ռուսաստանի այլ

քաղաքներում գտնվող հայ գրական և մշակութային արժեքները հանձնվում էին Հայաստանին: Հայ գաղթականությանը և առհասարակ Ռուսաստանում ապրող բոլոր հայերին թույլատրվում էր իրենց ողջ շարժական ունեցվածքով փոխադրվել Հայաստան: Հայաստանին անհատույց պիտի տրամադրվեին մի քանի տասնյակ շոգեքարշեր և վագոններ, ինչպես և «բավարար քանակությամբ» նավթ ինքնարժեքով: Խորհրդային կառավարությունը պարտավորվում էր Հայաստանին անվճար հատկացնել նաև երկու մանածագործարան և, որպես օգնություն հայ ժողովրդին, ՀՀ կառավարությանը կանխիկ տրամադրել 2,5 միլիոն ռուբլի ոսկով, հատկացնել երկրագործական գործիքներ, հացահատիկ և այլն [Տերտերեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 14]:

Չիչերինը խոստացավ շտապ կազմել պայմանագրի գրավոր տեքստը և մեկ-երկու օրից ներկայացնել ստորագրման: Գործընթացը, սակայն, ձգձգվեց: Տերտերյանի կարծիքով՝ դա պայմանավորված էր մայիսյան ապստամբության տապալումից հետո Բաքվում ապաստանած հայ բոլշևիկների գործելակերպով, որոնք ձգտում էին վիժեցնել ռուս-հայկական բանակցությունները [Տերտերեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 15]: Հունիսի վերջերին պատվիրակությունը հայ-ադրբեջական սահմանների վերաբերյալ ստացավ մի նոր առաջարկ, որով Ղարաբաղը թողնվում էր Ադրբեջանին, Նախիջևանը՝ Հայաստանին, իսկ Զանգեզուրի կարգավիճակը պետք է վճռվեր հետագայում, երբ խորհրդային կառավարության լիազոր պատվիրակ Բ. Լեգրանը տեղում ծանոթանար գավառի բնակչության ազգային կազմին և նրա ցանկությանը: Այդ առաջարկի հետ միասին Չիչերինը ներկայացրեց նաև բանավոր մի հուշագիր՝ մայիսյան ապստամբության ճնշումից հետո հայ բոլշևիկների հետապնդումների մասին, ըստ որի՝ մի քանի հազար մարդ գնդակահարված, իսկ տասնյակ հազարավորները ձերբակալված էին: Այդ մասին հայտնելով՝ Չիչերինը նախազգուշացնում է, որ եթե այդ հետապնդումներն անմիջապես չդադարեցվեն, խորհրդային կառավարությունը ստիպված կլինի դադարեցնել բանակցությունները:

Անտարակույս, այդ չափազանցված տեղեկությունները ստացվել էին հայ բոլշևիկներից, բայց մյուս կողմից՝ ակնհայտ էր, որ սահմանագծման նոր առաջարկը և հայ բոլշևիկների հալածանքների մասին Չիչերինի արտահայտած բողոքը ուղիղ համեմատական կապ ունեին միմյանց հետ: Պատվիրակությունը, որն այդ հանդիպման ժամանակ է տեղեկանում մայիսյան ապստամբության և դրա ճնշման մասին, փոխանակ իր կառավարության հետ համատեղ քայլեր ձեռնարկել թյուրիմացությունները պարզաբանելու համար, իր իրավասություններից դուրս գալով, կառավարությանը խրախուսում է անողոք լինի բոլշևիկների հանդեպ: «Այստեղ հաշուի է առնում միայն իրական ուժը, - նշում էր պատվիրակությունը կառավարությանն ուղարկած հեռագրում: - Որքան դուք ուժ և վճռականությին ցուցադրեք, այնքան մեզ հաշուի կ'առնեն այստեղ: Մեր

մասին բնաւ մի մտահոգուէք: Եղէք խիստ ու անողոք՝ ազգի դաւաճանների հանդէպ» [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 16]:

Ինչպէս վկայում է Տէրտէրյանը, Չիչերինը մայիսյան դեպքերից հետո ևս հակված չէր բավարարելու Ադրբեջանի ծավալապաշտական նկրտումները: «Օհօ՛,- ծանոթանալով դրանց՝ բացականչել էր նա,- Ջուլֆան ու Նախիջևանն էլ են ուզում. շատ են երես առել» [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 15]: Բացի այդ՝ վերոնշյալ հանդիպումից հետո Կարախանն էլ հարկ էր համարել պատվիրակությանը տեղեկացնել, որ Չիչերինի կողմից «խիստ ռճով եղած ծանուցումը զուտ ձևական մի պարտականութիւն էր», և պատվիրակությունը կարիք չունէր մտահոգվել այդ հուշագրով: Պատվիրակությունը, սակայն, դա ըստ էության ընկալելու և իմաստավորելու փոխարեն, համարում է ապացույց այն բանի, թէ «Մոսկուայում հաշուի են առնում միայն իրական ուժը» [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 16]:

Ինչ վերաբերում էր հայ-ադրբեջանական սահմանագծման Չիչերինի առաջարկին, ապա պատվիրակության ներսում այդ հարցում միասնական մոտեցում ի հայտ չեկավ: Լ. Ջարաֆյանը և Հ. Տէրտէրյանը պնդում էին, որ անհրաժեշտ է այն անհապաղ ընդունել և ստորագրել պայմանագիրը, որով ապահովվում էր Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախության ճանաչումը, Նախիջևանը միացվում էր Հայաստանին, Ջանգեզուրը նույնպէս, անկասկած, Հայաստանին էր պատկանելու, քանի որ այդ հարցը պետք է լուծվեր երկրամասի բնակչության ցանկությամբ: Իսկ Ղարաբաղի միացումը Հայաստանին կարող էր հետագայում իրողություն դառնալ:

Նրանց, սակայն, չհաջողվեց համոզել Լ. Շանթին, որն անհրաժեշտ էր համարում պայմանագիրը ստորագրելու համար նախապէս ստանալ Հայաստանի կառավարության համաձայնությունը: Ուստի հունիսի վերջին պատվիրակությունն այդ մասին հեռագրային հարցում կատարեց կառավարությանը: Պայմանագրի ստորագրումը, սակայն, այդպիսով մտավ փակուղի, քանի որ շուրջ մեկ ամիս Երևանից պատասխան չստացվեց [Տէրտէրեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 17]:

Մի կողմ թողնելով այն հարցադրումը, որ եթէ պատվիրակությունը Մոսկվա գնալու ճանապարհին շուրջ 20 օր չկորցներ, ապա ամենայն հավանականությամբ կկանխվէին Բաքվի բոլշևիկների հակագործողությունները, և պայմանագիրը կստորագրվեր առնվազն վերոնշյալ սկզբնական համաձայնությունների հիմքի վրա, չենք կարող չարձանագրել, որ Հայաստանի կառավարությունն այդուհետ ևս պայմանագրի ստորագրումը շարունակ ձգձգելու քաղաքականություն էր որդեգրել: Դա հանգեցրեց նաև պայմանագրի փոփոխված նախագծի ձախողմանը: ՀՀ կառավարությունը, մերժելով Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը և ապավինելով բացառապէս դաշնակիցների օգնությանը, որոնք նրան միայն սին հույսեր էին տալիս, իրեն զրկում էր տարածաշրջանի նոր քաղաքական վերաձևավորումների մասնակցելու հնարավորությունից. այն դեպքում, երբ

Ռուսաստանը մեծապես շահագրգռված էր Հայաստանի և Թուրքիայի միջև միջնորդությունը ստանձնելու և Հայկական հարցի լուծումը դաշնակիցների քաղաքական հավակնությունների ոլորտից դուրս բերելու հարցում:

Փաստորեն, երբ բանակցությունները, չնայած բոլոր ձգձգումներին, հասել էին իրենց տրամաբանական ավարտին, և մնում էր պայմանագիրը ստորագրել, Հայաստանի կառավարությունը պատվիրակության հարցմանը ընթացք չտալով, ձախողեց դա:

Այն, որ կառավարությունը ցանկություն չունեի Ռուսաստանի հետ մինչև իսկ վերոնշյալ նպաստավոր պայմաններով, պայմանագրային հարաբերությունների մեջ մտնել, վկայում էր նաև Թիֆլիսում ՀՀ ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի՝ հուլիսի 6-ին Օհանջանյանին ուղարկած հեռագիրը [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 769 ա, թ. 93: Հմմտ. [Ալիխանյան, 1966, 109]: ՀՀ կառավարությանը չսթափեցրեց մինչև իսկ Չիչերինի կողմից հուլիսի 20-ին Հ. Օհանջանյանին ուղարկված հեռագիրը, որում նա հստակ կերպով տեղեկացնում էր, որ «բացառապես խորհրդային կառավարության ազդեցության ներքո թուրք նացիոնալիստները դադարեցրին իրենց սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 203]:

Չնայած վերոնշյալ հարցման պատասխանն արագացնելու կառավարությանն ուղղված պատվիրակության նոր հեռագրին՝ Երևանից պատասխանն այդպես էլ չէր ստացվում, ուստի, երբ այդ պատճառով բանակցությունները փակուղի էին մտել, Չիչերինը պատվիրակությանը հայտնեց, որ խորհրդային կառավարությունը նպատակահարմար է գտնում բանակցությունները փոխադրել Երևան [Տերտերեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 23]: «Այստեղ,- գրում էր Չիչերինը հուլիսի 19-ին Բ. Լեզրանին,- բանակցությունները այդ ուղղությամբ նրանց հետ անհույս են: Մենք ամեն ինչի կարող ենք հասնել միայն Հայաստանում» [Ալիխանյան, 1966, 109-110]:

Նույն օրը Չիչերինը հեռագրով Օհանջանյանին տեղեկացրեց, որ բանակցությունները փոխադրվում են Երևան՝ հույս հայտնելով, որ Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեզրանի ժամանումը Երևան կնպաստի բոլոր հարցերի շուրջ համաձայնության գալուն և երկու երկրների միջև բարեկամական պայմանագիր ստորագրելուն: Չիչերինը միաժամանակ ընդգծում էր, որ խորհրդային կառավարությունը թուրքական ազգային կառավարության հետ հաստատվող բարեկամական հարաբերությունները օգտագործում է նաև այն բանի համար, «որպեսզի հայ ժողովրդի համար հնարավորություն ապահովի իր զարգացման համար բավականաչափ տերիտորիա ձեռք բերելու Փոքր Ասիայում», և որ «հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա [Խորհրդային Ռուսաստանի – Ա. Հ.] մշտական բարեկամական վերաբերմունքի ու նրա ուժերի սահմաններում՝ նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 203]:

Օհանջանյանը Չիչերինին պատասխան հեռագրով հայտնում է, որ ինքը դեմ չէ բանակցությունները Երևան փոխադրելու առաջարկին, բայց դրանք կարող են սկսվել միայն Շանթի պատվիրակության վերադարձից հետո [Վրացյան, 1993, 484]: Եվ քանի որ Օհանջանյանն ու իր կառավարությունը շարունակում էին Ռուսաստանի հետ բանակցություններից խուսափելու և դրանք ձգձգելու քաղաքականությունը, պատվիրակությունը, բնականաբար, դարձյալ պետք է հնարավորինս ուշացումով զար Երևան: Այդպես էլ եղավ: Երկար ժամանակ Մոսկվայում անգործ սպասելով կառավարության հրահանգին, որպեսզի վերադառնան Երևան, պատվիրակության անդամներն, ի վերջո, Մոսկվայից ճանապարհ ընկան օգոստոսի 10-ին [Տերտերեան Համբարձում, Հայրենիք ամսագիր, 2.336, 1954, 26], որից հետո, երկար կանգ առնելով Ռոստովում ու այլ վայրերում, Երևան հասան ավելի քան մեկ ամիս անց՝ սեպտեմբերի 14-ին [Վրացյան, 1993, 485]: Մինչդեռ պատվիրակությունը, շտապելու ցանկություն ունենալու դեպքում, հնարավորություն ուներ Լեզրանի և նրա պատվիրակության հետ միասին նույն գնացքով վերադառնալ Հայաստան: Դրա համար անհրաժեշտ էր միայն այդ ցանկությունը ներկայացնել խորհրդային կողմին:

Լեզրանը, ստանալով ՀՀ կառավարության հետ բանակցելու և պայմանագիր կնքելու՝ Լենինի ու Կարախանի ստորագրությամբ վավերացված լիազորագիրը, հուլիսի կեսին իր պատվիրակության հետ միասին ժամանեց Բաքու և ապա ուղևորվեց Երևան: Հասնելով Աղստաֆա՝ նա ցանկացավ այնտեղից մեկնել Երևան, սակայն ՀՀ կառավարությունը հրաժարվեց նրան ընդունել: Հինգ օր Աղստաֆայում սպասելուց հետո Լեզրանը ստիպված եղավ մեկնել Թիֆլիս [Ալիխանյան, 1966, 120]:

Եթե Լեզրանի հետ բանակցությունների հետաձգումը Օհանջանյանն ու իր կառավարությունը կարող էին «հիմնավորել» նրանով, որ Շանթի պատվիրակությունը դեռ չէր վերադարձել, ապա Լեզրանի՝ Երևան մուտքի արգելքը, որն ամեն բանից զատ դիվանագիտական էթիկայի կոպտագույն խախտում էր, նրանք փորձում էին «հիմնավորել» այն հանգամանքով, որ Ռուսաստանը դեռ չի ճանաչել Հայաստանի անկախությունը [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 769, թ. 255]: ՀՀ կառավարությունն, այսպիսով, մի կողմից, շարունակում էր փակուղի տանել մոսկովյան բանակցությունները, այն դեպքում, երբ Ռուսաստանն աներկբայորեն իր պատրաստակամությունն էր հայտնել ստորագրվելիք պայմանագրում ճանաչելու Հայաստանի անկախությունը, մյուս կողմից՝ ճանաչման իրողություն դարձած չլինելը «հիմք» էր համարում՝ մերժելու Լեզրանի և նրա պատվիրակության ընդունումը Երևանում:

Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչն, այդպիսով, ստիպված էր երկար ժամանակ մնալ «վտարանդի», և մինչև իսկ հուլիսի 29-ին Հայաստանի կառավարությանն ուղղված Չիչերինի հեռագիրը, որով վերջինս կոչ էր անում ապահովել Լեզրանի գլխավորած պատվիրակության անարգել ուղևորությունը

Երևան և նրա հետ անմիջական բանակցությունների մեջ մտնել [Ալիխանյան, 1966, 121-122], ոչինչ չփոխեց:

Հուլիսի 19-ին, երբ Մոսկվայում հայկական պատվիրակության հետ բանակցությունները, փակուղի մտնելով, դադարեցվել էին, Մոսկվա հասավ թուրքական պատվիրակությունը՝ Բեքիր Սամիի գլխավորությամբ: Հուլիսի 24-ին սկսվեցին բանակցությունները, որոնք Ռուսաստանի կողմից վարում էին դարձյալ Չիչերինը և Կարախանը: Թուրք պատվիրակներն առաջարկում էին կնքել պաշտպանողական և հարձակողական դաշինք, որին ռուսական կողմը չհամաձայնեց, ուստի թուրքերն առաջարկեցին կնքել բարեկամության և եղբայրության պայմանագիր, որը Ռուսաստանի կողմից ընդունելի էր: Մեկ ամիս շարունակվող բանակցությունների ընթացքում թուրքերի պահանջները գլխավորապես վերաբերում էին Ռուսաստանից ռազմական և նյութական օգնություն ստանալուն և Հայաստանի վրայով Ռուսաստանի հետ տարանցիկ ճանապարհի բացելուն, որը Հայաստանի կառավարությունը հրաժարվում էր տրամադրել: Վերջին հարցի կապակցությամբ ինչպես Կարախանն, այնպես էլ Չիչերինը հայտնեցին, որ Ռուսաստանը չի կարող պաշտպանել թուրքերի ցանկությունը՝ իրենց ուժերով բացելու ճանապարհը, քանի որ դա կհանգեցներ Թուրքիայի և Հայաստանի միջև պատերազմի: Իսկ նյութական օգնության տրամադրումը Չիչերինը պայմանավորում էր Վանի և Բիթլիսի արևելյան մարզերից որոշ տարածքներ Հայաստանին տրամադրելով:

Չիչերինը Հայաստանի և Թուրքիայի սահմանագծման հարցում առաջ էր քաշում այն սկզբունքը, ըստ որի՝ այն տարածքները, որտեղ մինչև 1914 թ. հայերը մեծամասնություն էին կազմում, պետք է անցնեին Հայաստանին, իսկ նրանք, որտեղ առկա էր եղել մահմեդական բնակչության մեծամասնություն՝ Թուրքիային [Սարգսյան, 1992, 21]:

Ի վերջո, չնայած մեկ ամիս տևող բանակցություններից հետո օգոստոսի 24-ին արդեն պատրաստված էր «Ռուսաստանի և Թուրքիայի միջև պայմանագրի նախագիծը», սակայն թուրքական պատվիրակությունը, հայկական տարածքների հարցում խորհրդային կառավարության հետ համաձայնության չգալով, վերադառնում է առանց այն ստորագրելու: Թուրք պատմաբան Թ. Բիուիկլիոլուն ևս նշում է, որ այդ համաձայնագրի չվավերացման հիմնական պատճառն այն էր, որ խորհրդային կառավարությունը նպատակադրվել էր թուրքական արևելյան վիլայեթների տարածքները տալ «դաշնակցական հայերուն» [Մսրրլեան, 1979, 43]:

Խորհրդային Ռուսաստանն, այսպիսով, մինչև իսկ հայկական կողմի հետ Մոսկվայում վարվող բանակցությունների խափանումից հետո, հույս ունենալով, որ հայկական կողմը Երևանյան բանակցությունների միջոցով կընդունի իր միջնորդային առաքելությունը, փորձում էր պատնեշել Հայաստանի հանդեպ Թուրքիայի հարձակողական նկրտումները: Մինչդեռ բացառապես դաշնակիցներին ապավինած և

անձկորեն Սևրի պայմանագրին սպասող Հայաստանի կառավարությունը, մերժելով նույնիսկ Լեզրանին ընդունել, խուսափելով Ռուսաստանի հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումից, այդ կերպ իր հերթին կանաչ լույս էր վառում թուրքական հարձակման առաջ՝ նվազագույնի հասցնելով այդ դեպքում Ռուսաստանի միջամտության հնարավորությունը: Նույնիսկ կարմիր բանակի կողմից Արցախի, Զանգեզուրի և Նախիջևանի՝ որպես վիճելի տարածքների գրավումը, որի հետ ՀՀ կառավարությունը ստիպված եղավ համակերպվել օգոստոսի 10-ին Թիֆլիսում կնքված համաձայնագրով, չաթափեցրեց վերջինիս և չմղեց վերագնահատելու տարածաշրջանի քաղաքական վերաձևավորումները, որոնք բախտորոշ նշանակություն պետք է ունենային Հայաստանի և հայ ժողովրդի համար:

ՀՀ կառավարությունը, ոգևորված Սևրի պայմանագրի ստորագրումից և դաշնակիցների խոստումներից, ոչ միայն ձգձգում և ձախողում էր Ռուսաստանի հետ բանակցությունները, այլև մինչև իսկ, ինչպես անգլիական գերագույն կոմիսար գեներալ Լուկն էր իր կառավարությանը հաղորդում, նրան գաղտնի տեղեկացրել էր բոլշևիկներին Անդրկովկասից դուրս մղելու համար Վրաստանի և Մակուի խանի հետ հակաբոլշևիկյան դաշինք կնքելու իր պատրաստակամության մասին [Գալոյան, 1999, 257]:

Լրացուցիչ մեկնաբանությունների կարիք, թերևս չկա: Ինչ վերաբերում է հայկական պատմիրականությանը, ապա Շանթին դրա նախագահ նշանակելը պատմաբաններից շատերն են համարել կոպիտ սխալ, սակայն, Ռուսաստանի հետ բանակցությունները ձգձգելու և ձախողելու Օհանջանյանի որդեգրած քաղաքականությունը նկատի առնելիս, պետք է ընդունել, որ Շանթը միանգամայն պատշաճում էր այդ քաղաքականության իրագործմանը: Նա ոչ միայն դիվանագիտական հմտություններից զուրկ անձնավորություն էր, այլև, ինչպես անգամ Վրացյանն է նշում, «ամբողջ էությամբ բոլշևիկներին ատող» [Վրացյան, 2007, 126]. մի հատկանիշ, որն, անկասկած, պետք է անթույլատրելի լիներ բոլշևիկյան Ռուսաստանի հետ բարեկամական, պայմանագրային հարաբերություններ հաստատող պատմիրականության նախագահի համար:

Ուշագրավ է, որ նույնիսկ «բոլշևիկներին ատող» Շանթը Վրացյանին ուղղված իր նամակում չի հերքում Հայաստանի հանդեպ խորհրդային կառավարության բարեկամական դիրքորոշումը և հայկական կողմի հետ համաձայնության գալու՝ նրա ձգտումը: «Ան [Բ. Լեզրանը – Ա. Հ.] կջանար իրոք որ հաշտության բերեր մեզի ու Բաքուն, մեզի ու թուրքերը- գրում է նա:- Ինձի կթվի, որ Լենինը կողմնակից էր Հայաստանի մնալուն, նույնիսկ ո՛չ բոլշևիկյան, ինձի կթվի, որ Կարախանը նմանապես այդ ուղղությամբ կաշխատեր. ինձի կթվի, որ ներքին կապ կար Լեզրանի ու Կարախանի միջև» [Վրացյան, 1993, 651]:

Թե Շանթն անձամբ որպիսի կարևորություն էր տալիս իր առաքելությանը, վկայում է և այն, որ նա այդպես էլ թողին չհանձնեց իր հուշերը՝ անգամ Վրացյանի բազմաթիվ խնդրանքներից հետո [Վրացյան, 1993, 645]:

Թուրք-հայկական երկխոսությունը 1920 թ. Ամռանը: Հայկական գործառնական կողմից 1920 թ. հունիսին Օլթիի գրավումից հետո Թուրքիայի արտգործկոմիսար Բ. Սամին երկու հեռագրեր ուղարկեց (հունիսի 24-ին և հուլիսի 8-ին) ուղարկեց ՀՀ կառավարությանը, որոնցում հավաստում էր Հայաստանի հետ համաձայնության գալու՝ թուրքական կառավարության ցանկությունը: «Խաղաղասիրական դիրքերից» բողոքելով «մուսուլման բնակչության» հանդեպ կատարվող հարձակումների դեմ, որոնք խոչընդոտում էին «բարեկամական և հարևանական հարաբերություններին», Սամին հորդորում էր դադարեցնել դրանք, չտրվել Անգլիայի սադրանքներին և գործառնական այդ շրջանից ետ քաշել [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 13]: Միաժամանակ նա վստահեցնում էր, թե «մեր կառավարությունը և թուրք ազգը հայ կառավարության և հայ ժողովուրդին թշնամի չեն և ցանկանում են գտնել մի կապ փոխադարձ շահերը ապահովելու համար» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 18]:

Այդ հեռագրերի պատասխաններն ուղարկվեցին ոչ թե Օհանջանյանի, այլ արտգործնախարարության ընդհանուր քարտուղար Հ. Տեր-Հակոբյանի ստորագրությամբ, ինչը, ինչպես վկայում է Խատիսյանը, «սաստիկ վիրավորել» էր Բ. Սամին և իր գործընկերներին [Խատիսյան, 2018, 288]: Այդպես էլ պետք է լիներ, քանի որ դա ոչ միայն վկայում էր Թուրքիայի հետ բանակցելու Հայաստանի կառավարության մտադրության բացակայությունը, այլև դիվանագիտական էթիկայի խախտում էր: Պատասխան գրություններում, որոնք Սամին ուղարկվեցին համապատասխանաբար հունիսի 30-ին և հուլիսի 28-ին, նշվում էր, որ Թուրքիայի և Հայաստանի միջև կանոնավոր հարաբերություններ կհաստատվեն այն ժամանակ, երբ Թուրքիայի Ազգային մեծ ժողովը կձանաչի «Տաճկաստանի հայկական վիլայեթներում Հայաստանի անկախության իրավունքը» [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 16]: Հմտ. Խատիսյան, 2018, 288]: Իսկ Օլթիի առնչությամբ հաղորդվում էր, որ այդ շրջանում հայերի «ռազմական գործողությունները նպատակ ունեն և ազատել հայկական հողամասը անիշխանական տարրերից»: [ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 16]:

Չնայած Սամին վերոնշյալ հեռագրերում Օլթիի վերադարձումը հիմնավորում էր Բաթումի և Բրեստի պայմանագրերով, այնուհանդերձ այդ օրերին, երբ մի կողմից դաշնակիցները, մյուս կողմից Խորհրդային Ռուսաստանն իրենց էին վերապահում հայ-թուրքական սահմանների որոշումը, քեմալական կառավարությունը, ձգտում էր Հայաստանի հետ բանակցել և փոխադարձ համաձայնության հասնել: Հայկական կողմը, սակայն, այդ ցանկությունը ի հայտ չբերեց: «Օհանջանյանն այնքան բոբիկ քաղաքագետ

էր,- գրում է Լեոն,- եւ այնքան տարված դաշնակցական գոռոզությամբ, որ չուզեց նույնիսկ իմանալ, թե ի՛նչ ասելիքներ եւ պայմաններ ունի թշնամին, նույնիսկ ինքը չպատասխանեց Անկարային, այլ իր քարտուղարին հանձնարարեց պատասխանել, թե հարաբերությունները Թուրքիայի եւ Հայաստանի մեջ կորոշվեն Մերի դաշնագրի անթերի գործադրությամբ: Կասկած չկա, որ եթե չլինէր այս կոպիտ վարմունքը եւ եթե հարկավոր լինէլ իմանալ, թե ինչ է առաջարկվում հակառակորդի կողմից, գուցե եւ կարելի լիներ երկուստեք զիջողությամբ ստեղծել մի կայուն կացություն» [Լեո, 2009, 408]:

Նույն տեսակետն է արտահայտում նաև Քաջագնունին՝ «անհերքելի, աղաղակող» համարելով այն փաստը, որ Հայաստանի կառավարությունը չի արել այն ամենը, ինչ պետք է աներ պատերազմից խուսափելու համար: Նա միաժամանակ մատնանշում է Օհանջանյանի կառավարության վարքագծի պատճառները, որոնք, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, լիովին հիմնավորված էին: «Մենք անտեղեակ ենք եղել թուրքերի իսկական ոյժի մասին ու շատ վստահ ենք եղել մեր սեփական ոյժերի վրայ,- գրում է նա:- Այստեղ էր հիմնական սխալը» [Քաջագնունի, 1925, 41]: Մինչդեռ, ըստ Քաջագնունու, բանակցությունների դեպքում թուրքերը հավանաբար սկսելու էին Բաթումի և Բրեստի պայմանագրերից և ապա, աստիճանաբար զիջելով, հասնելու էին մինչև 1914 թ. սահմանը և գուցե շարունակեին ետ գնալ՝ հրաժարվելով նաև Բայազետից ու Ալաշկերտից [Քաջագնունի, 1925, 42]:

Ինչպես վկայում են փաստերը, Քաջագնունին միանգամայն իրավացի էր: Նույն հուլիս ամսին, երբ փոխանակվում էին վերոնշյալ պաշտոնական գրությունները, Խատիսյանն իր օտարեկրյա ճանապարհորդության ընթացքում հասնում է Կ. Պոլիս՝ այնտեղ մնալով մեկ շաբաթ: Նրա հետ երկու անգամ մասնավոր հանդիպում է ունենում Թուրքիայի ներքին գործերի նախարար Ռեշիդ փաշան, որը նրա համար գծում է Հայաստանի՝ Թուրքիայի համար ընդունելի սահմանները՝ «մտցնելով Հայաստանի հողերի մեջ ամբողջ Ռուսական Հայաստանը, Ալաշկերտի և Բասենի հովիտները և իբրև նավահանգիստ՝ Ռիզեն» [Խատիսյան, 2018, 257]: Դա, ըստ էության, բանակցությունների դեպքում դառնալու էր թուրքական պաշտոնական կողմի ելակետը:

Այն մասին, որ Թուրքիան այդ ժամանակ ոչ միայն ձգտում, այլև ջանում էր Հայաստանի կառավարության հետ համաձայնության գալ, խիստ ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև Հ. Տեր-Հակոբյանը: Ինչպես նա տեղեկացնում է, Երևան էին եկել երկու թուրք պատվիրակներ, որոնցից մեկը խոսում էր քեմալական, իսկ մյուսը՝ Թուրքիայի օրինական կառավարության անունից: Նրանք Հայաստանի կառավարությանը հաղորդում են, որ իրենք Հայաստանի հետ համաձայնելու հարցում միասնաբար են հանդես գալիս, և Հայաստանի կառավարությունը իրենցից որ մեկի հետ էլ համաձայնի, դա ընդունելի կլինի ինչպես Թուրքիայի մեծ վեզիր և ներքին գործերի նախարար Ֆերիդ փաշայի, այնպես էլ Քեմալի համար:

Թուրք պատվիրակները հորդորում էին մերժել Սևրի պայմանագիրը և երկկողմ պայմանագիր կնքել Հայաստանի սահմանների վերաբերյալ՝ առաջարկելով հետևյալ սահմանը. «Երեւանեան հանրապետութիւնը պիտի ընդարձակուէր դէպի Վան և անկից դէպի հիւսիս բարձրանալով պիտի հասնէր Սեւ Ծով, ուր Բիզէի նաւահանգիստը պիտի թողուէր Հայոց, սակայն Էրզրում քաղաքը պիտի մնար Թուրքիոյ» [Տեր-Յակոբեան, 1921, 18-19]:

Թուրք պատվիրակները ջանում էին համոզել՝ ընդունելու այդ սահմանը և հույս չկապել դաշնակիցների հետ: «Թուրք պատվիրակները երկար փաստաբանեցին իրենց պահանջը, - գրում է Տեր-Հակոբյանը: - Պնդեցին, թէ Հայաստան կրնայ ըլլալ որ զոջայ, թէ՛ Համաձայնականք հակառակ խոստումներու որևէ իրական օգնութիւն չեն ընձեռեր, քանի որ քանիցս յայտարարեցին, թէ չեն կրնար գոհողութիւն ընել ուրիշներու համար, թէ Հայերը խորհրդային Ռուսաստանն ալ իրենց թշնամի դարձուցած են Պալշէվիքներու դէմ հալածանքով, և թէ՛ Ռուսիա ու Թուրքիա իբր երկու դաշնագիր կողմեր, երբ սեղմեն Հայաստանը երկու կողմէն, այն ատեն, փճացումը վերջնական պիտի ըլլայ» [Տեր-Յակոբեան, 1921, 19]:

Թուրք պատվիրակների գործադրած ջանքերը որևէ հաջողություն չունեցան, և նրանք մեկնեցին Երևանից՝ «իրենց հետ տանելով բացարձակ մերժում»: Տեր-Հակոբյանի հաղորդման համաձայն՝ թուրք պատվիրակների հանդիպումը Հայաստանի կառավարության հետ գաղտնի է պահվել, և միայն հայկական խորհրդարանի նոյեմբերի 11-ի նիստում է դրան անդրադարձ կատարվել:

Ինչպես տեսնում ենք, թուրքերը Հայաստանի հետ համաձայնության գալու նշված երկու փորձերը կատարել են՝ բանակցությունների համար ելակետ դարձնելով ոչ թե Բրեստի կամ Բաթումի պայմանագրերը, այլ ՀՀ-ին նոր տարածքներ տրամադրելը: Եթե Օհանջանյանի կառավարությունը ընդառաջեր բանակցելու թուրքական առաջարկին, ապա, թերևս, հնարավոր կլիներ էլ ավելի շահավետ պայմաններով Թուրքիայի հետ պայմանագիր կնքել: Թուրքիայի հետ համաձայնության գալու և պատերազմը կանխելու այդ վերջին հնարավորությունը, սակայն, նույնպես չօգտագործվեց, քանի որ Հայաստանի կառավարությունը, ըստ Սասունու՝ «շլացած քաղաքական խիստ նպաստավոր պայմաններէ՝ Դաշնակիցներուն հավատալով, հույս ուներ, թէ պիտի կարողանա «անմիջապէս օգտվիլ այս թուղթէ գենքէն»¹ [Սասունի, 1969, 24-25]:

Քեմալը, որն, ինչպես լուսաբանվեց, Խորհրդային Ռուսաստանի ճնշմամբ ստիպված էր եղել ոչ միայն հրաժարվել հունիսին Հայաստանի վրա հարձակվելուց, այլև ընդունել նրա միջնորդությունը Հայաստանի և Թուրքիայի սահմանագծման հարցում, հայկական

¹ Նկատի ունի Սևրի պայմանագիրը:

կողմի հետ համաձայնության գալու վերոնշյալ երկխոսությունը ձեռնարկել էր՝ տեղի տալով Ռուսաստանի դիրքորոշմանը: Վերջինս, մինչև իսկ հայկական կողմի հետ Մոսկվայում վարվող բանակցությունների խափանման պայմաններում, հույս ունենալով, որ հայկական կողմը կընդունի իր միջնորդությունը, փորձում էր պատնեշել Թուրքիայի հարձակողական նկրտումները, ավելին՝ Թուրքիային ստիպել տարածքային զիջումներ կատարելու Հայաստանին: Մինչդեռ բացառապես դաշնակիցներին ապավինած և անձկորեն Սևրի պայմանագրին սպասող Հայաստանի կառավարությունը, չընդունելով Ռուսաստանի միջնորդությունը և խուսափելով վերջինիս հետ պայմանագրային հարաբերությունների հաստատումից, այդ կերպ իր հերթին կանաչ լույս էր վառում թուրքական հարձակման առաջ՝ նվազագույնի հասցնելով այդ դեպքում Ռուսաստանի միջամտության հնարավորությունը:

Եզրակացություն: 1920 թ. մուտք գործելով Այսրկովկաս՝ Խորհրդային Ռուսաստանը ձգտում էր իր ձեռքում պահել Հայկական հարցի լուծումը՝ այդ կերպ նաև տարածաշրջանից մեկուսացնելով իր թշնամի՝ Անտանտի դաշնակիցներին: Հունիսին Ռուսաստանը Քեմալին արգելեց հարձակվել Հայաստանի վրա և ստիպեց ընդունել իր միջնորդությունը հայ-թուրքական տարածքային սահմանազատման հարցում: Չնայած ՀՀ-ին Արևմտյան Հայաստանից տարածքներ տալու Ռուսաստանի խոստմանը՝ Հայաստանի կառավարությունը հրաժարվեց ընդունել վերջինիս միջնորդությունը: Ավելին, Օհանջանյանի կառավարությունը, ապավինելով բացառապես Անտանտի դաշնակիցներին, համառորեն խափանում էր Ռուսաստանի հետ երկկողմ հարաբերությունների հաստատումը՝ այդ կերպ զրկելով իրեն վերջինիս աջակցությունից և ականա ճանապարհ բացելով Քեմալի առաջ Հայաստանը նվաճելու համար: Ռուսական գործոնն իրատեսորեն գնահատելու և օգտագործելու դեպքում Հայաստանը կարող էր ոչ միայն կանխել քեմալական հարձակումն, այլև՝ զգալիորեն ընդարձակել իր տարածքը: Իսկ այն տարածված տեսակետը, թե Հայաստանը զոհ դարձավ քեմալա-բոլշևիկյան դաշինքին, իրականությանը չի համապատասխանում և ստեղծվել է՝ ՀՀ կառավարության ձախողումներն արդարացնելու նպատակով:

Գրականության ցանկ

- HAA, f. 200, ts'. 1, g. 369, t'. 36-37.
HAA, f. 200, ts'. 1, g. 581, t'. 51. 203, 214.
HAA, f. 200, ts'. 1, g. 604, t'. 13, 16, 18.
HAA, f. 200, ts'. 1, g. 769, t'. 255.
HAA, f. 200, ts'. 1, g. 769 a, t'. 93.
HAA, f. 200, ts'. 1, g. 766, t'. 110a, 111.

- Alikhanyan 1966** - Alikhanyan S., Rrusastani dery hay zhoghovrdi azatagrman gortsum (1917-1921 t't'), Yerevan, «Hayastan», 413 ej. **(in Armenian)**
- Arzumanyan 1973**- Arzumanyan M., Arhavirk'its' veratsnund, Yerevan, «Hayastan», 584 ej. **(in Armenian)**
- Galoyan 1999**- Galoyan G., Hayastany yev mets terut'yunnery 1917-1923 t't', Yerevan, «Gitut'yun», 540 ej. **(in Armenian)**
- Leo 2009**- Leo, Ants'yalits', Yerevan, «SHem», 495 ej. Khatisyan 2018, Khatisyan A., Hayastani hanrapetut'yan tsagumn u zargats'umy, Yerevan, Ani kentron, 480 ej. **(in Armenian)**
- Karapetyan 1965**- Karapetyan S. KH., 1920 t'vakani hay-t'urk'akan paterazmy yev Sovetakan Rrusastany, Yerevan, «Hayastan», 61 ej. **(in Armenian)**
- Karinyan 1926**- Karinyan A., Dashnakts'ut'yuny p'asteri dem, T'iflis, «Zaria Vostoka», 88 ej. **(in Armenian)**
- Sasuni 1969**- Sasuni K., Hay-t'rk'akan paterazmy (1920-in), Peyrut', «Hamazgayin», 218 ej. **(in Armenian)**
- Vrats'yan 1993**- Vrats'yan S., Hayastani Hanrapetut'yun, Yerevan, «Hayastan», 1993, 704 ej. **(in Armenian)**
- Vrats'ean 2007**- Vrats'ean S., Keank'i ughinerov. depk'er, demk'er, aprumner, Ye. hator, Peyrut', «Vahe Set'ean», 354 ej. **(in Armenian)**
- Ter-Yakobean 1921**- Ter-Yakobean Y., Hayastani verjin aghety, K. Polis, hrat. Mik'ayel Ter-Sahakean, 125 ej. **(in Armenian)**
- Terterean 1954**- Terterean H., Hayastani Hanrapetut'ean yev Khorhrdayin Rrusastani banakts'ut'iwnnery, Levon Shant'i patuirakut'iwny, mas arrajin, Hayrenik' amsagir, N 1(335), 1954, ej 1-14. **(in Armenian)**
- Terterean 1954**- Terterean H., Hayastani Hanrapetut'ean yev Khorhrdayin Rrusastani banakts'ut'iwnnery, Levon Shant'i patuirakut'iwny, mas arrajin, Hayrenik' amsagir, N 2(336), 1954, ej 14-26. **(in Armenian)**
- K'ajaznuni 1925**- K'ajaznuni Y., H. Y. Dashnakts'ut'iwny anelik' ch'uni aylevs, Viyenna, Mkhit'arean tparan, 107 ej. **(in Armenian)**